



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան3

Գյուտեր և օգտակար մոդելներ4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ7

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 11

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը և իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը..... 13

Իրավական դաշտ 14

Միջազգային համագործակցություն 15

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

| | |
|----------------------|--|
| Խմբագրական կոլեգիա՝ | Արմեն ԱԶԻԶՅԱՆ Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ Արվինե ԵԳԱՆՅԱՆ Սուսաննա ՂԱԿԹՅԱՆ |
| Դիզայնը և էջադրումը՝ | Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ |

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 011 597 537 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 011 597 535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
 Internet: www.aipa.am
 E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2013թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառնությունների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱՎԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2013թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 132 գյուտի և 40 օգտակար մոդելի հայտ, որոնցից 165-ը՝ ազգային հայտատուներից, 7-ը՝ օտարերկրյա հայտատուներից:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 3851:

Աղյուսակ 1

| Երկիրը | 2012 | 2013 |
|-----------------|------------|------------|
| Հայաստան | 175 | 165 |
| Այլ երկրներ | 7 | 7 |
| Ընդամենը | 182 | 172 |

2012թ. համեմատությամբ 2013թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը պակասել է 10-ով, ընդ որում՝ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 10-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը մնացել է նույնը:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ժնև) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող Եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2013թ. գործակալությունը ստացել է 5 միջազգային հայտ, ստուգել է անհրա-

ժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2013թթ. ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 78 միջազգային հայտ:

2013թ. գործակալությունը ստացել է 4 Եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է Եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2013թթ. ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 36 Եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 134 հայտով, ընդ որում՝

66 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,

- 28 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,

- 22 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին,

- 15 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին,

- 3 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:


Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ. 1-ում:

2013թ. ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 2-ում՝ գրաֆիկի տեսքով: 2013թ. ստացված հայտերի բաշխումն ըստ տեխնիկայի բնագավառների բերված են աղյուսակ 2-ում:

2013թ. տրվել է գյուտի 99 արտոնագիր և օգտակար մոդելի 31 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 7 արտոնագիր և օգտակար մոդելի 1 արտոնագիր:

2013 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 2796 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 263-ը, իսկ օգտակար մոդելի 344 արտոնագրերից գործում են 86-ը:

2013 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3453 Եվրասիական արտոնագրեր:




Նկ. 1

■ Արտոնագիր տալու մասին որոշում ստացած հայտեր

■ Հայտը հետ կանչված ճանաչելու և արտոնագիր տալը մերժելու մասին որոշում ստացած հայտեր

Նկ. 2



- A. Մարդու կենսական պահանջների բավարարում
- B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
- C. Քիմիա, մետաղագործություն
- D. Մասնագործություն, թուղթ
- E. Շինարարություն, լեռնագործություն
- F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, զենք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
- G. Ֆիզիկա
- H. Էլեկտրականություն

Աղյուսակ 2

| No | Բնագավառը (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի) | Ներկայացված հայտերի քանակը | %-ը հայտերի ընդհանուր թվի մեջ |
|-----------------|--|----------------------------|-------------------------------|
| 1. | Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B30, B32) | 22 | 12.79% |
| 2. | Շինարարություն (E01-E06) | 20 | 11.62% |
| 3. | Չափում և օպտիկա (G01-G03) | 16 | 9.30% |
| 4. | Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացի A61K) | 13 | 7.55% |
| 5-8. | Շարժիչներ և պոմպեր (F01-F04) | 11 | 6.39% |
| 5-8. | Անօդաչուական քիմիա (C01-C05, C30) | 11 | 6.39% |
| 5-8. | Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա (F21-F28) | 11 | 6.39% |
| 5-8. | Սննդամթերք և ծխախոտ (A21-A24) | 11 | 6.39% |
| 9. | Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12-C14) | 8 | 4.65% |
| 10. | Հագուստ և կենցաղի առարկաներ (A41-A47) | 7 | 4.06% |
| 11-24. | Այլ բնագավառներ | 42 | 24.42% |
| Ընդամենը | | 172 | 100 |


ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2013թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1797 հայտ (որոնցից 1167-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքային նշանների 1791 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 18 հայտ, 131 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1567 ապրանքային նշաններ (որոնցից 936-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 3025 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 2560 որոշում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ,

Նկ. 3



նախնական մերժման մասին կայացվել է 616 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 425:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 3-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 43 հայտ:

2012թ. համեմատությամբ 2013թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ 1123-ի դիմաց (2012թ.) 1167 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը,

ապա այն նվազել է ազգային ընթացակարգով (658-ի (2012թ.) դիմաց 631 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 33 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 29-ը՝ ազգային հայտատուներից, 3-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ ԱՄՆ-ից), որոնցից 30-ը ստացել են վկայագիր:

2012թ. համեմատությամբ 2013թ. արդյունաբերական նմուշի հայտերի քանակը նվազել է՝ ազգային հայտատուներից ստացված՝ 39-ի դիմաց (2012թ.) 29 հայտ, իսկ օտարերկրյա հայտատուներինը՝ 18-ի դիմաց (2012թ.) 4 հայտ:

| Երկիրը | | Ըստ ազգային ընթացակարգի | Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում | Ընդամենը |
|--------|---------------------------|-------------------------|---|----------|
| AM | Հայաստան | 1167 | | 1167 |
| AE | Արաբական Միացյալ Ամիր. | 17 | | 17 |
| AR | Արգենտինա | 5 | | 5 |
| AT | Ավստրիա | | 12 | 12 |
| BE | Բելգիա | 8 | | 8 |
| BG | Բուլղարիա | 6 | 40 | 46 |
| BR | Բրազիլիա | 5 | | 5 |
| BS | Բահամյան կղզիներ | 4 | | 4 |
| BX | Բենիլյուքս | | 140 | 140 |
| BY | Բելառուս | | 45 | 45 |
| CA | Կանադա | 10 | | 10 |
| CH | Շվեյցարիա | 21 | 215 | 236 |
| CL | Չիլի | 1 | | 1 |
| CN | Չինաստան | 15 | 157 | 172 |
| CU | Կուբա | 1 | | 1 |
| CY | Կիպրոս | 4 | 10 | 14 |
| CZ | Չեխիայի Հանրապետություն | 2 | 65 | 67 |
| DE | Գերմանիա | 15 | 238 | 253 |
| DK | Դանիա | 1 | 10 | 11 |
| EE | Էստոնիա | | 5 | 5 |
| EG | Եգիպտոս | 1 | 1 | 2 |
| EM | Եվրոպայի Միություն (OHIM) | | 185 | 185 |
| ES | Իսպանիա | 2 | 55 | 57 |
| FI | Ֆինլանդիա | 4 | 10 | 14 |
| FR | Ֆրանսիա | 20 | 140 | 160 |
| GI | Ջիբրալթար | 1 | | 1 |
| GB | Միացյալ Թագավորություն | 44 | 75 | 119 |
| GE | Վրաստան | 2 | 10 | 12 |
| GR | Հունաստան | | 1 | 1 |
| HK | Հոնգ Կոնգ | 4 | | 4 |
| HR | Խորվատիա | | 3 | 3 |
| HU | Հունգարիա | | 167 | 167 |
| IE | Իռլանդիա | 5 | 4 | 9 |
| IL | Իսրայել | 3 | 3 | 6 |
| IN | Հնդկաստան | 21 | | 21 |

| | | | | |
|-----------------|---------------------------|-------------|-------------|-------------|
| IR | Իրան | 2 | 5 | 7 |
| IT | Իտալիա | 3 | 210 | 213 |
| JO | Յորդանան | 4 | | 4 |
| JP | Ճապոնիա | 20 | 45 | 65 |
| KR | Կորեայի Հանրապետություն | 17 | 13 | 30 |
| KY | Կայմանյան կղզիներ | 1 | | 1 |
| KZ | Ղազախստան | | 15 | 15 |
| LB | Լիբանան | 4 | | 4 |
| LI | Լիխտենշտայն | 1 | | 1 |
| LV | Լատվիա | | 12 | 12 |
| LT | Լիտվա | | 20 | 20 |
| LU | Լյուքսեմբուրգ | 2 | | 2 |
| MA | Մարոկկո | 1 | 2 | 3 |
| MC | Մոնակո | | 10 | 10 |
| MD | Մոլդովայի Հանրապետություն | | 9 | 9 |
| MK | Մակեդոնիա | 2 | 3 | 5 |
| MX | Մեքսիկա | 3 | | 3 |
| MY | Մալայզիա | 2 | | 2 |
| NL | Նիդերլանդներ | 12 | | 12 |
| NO | Նորվեգիա | | 3 | 3 |
| PL | Լեհաստան | 8 | 60 | 68 |
| PT | Պորտուգալիա | | 9 | 9 |
| QA | Զաթար | 1 | | 1 |
| RU | Ռուսաստանի Դաշնություն | 52 | 570 | 622 |
| SA | Սաուդյան Արաբիա | 2 | | |
| SE | Շվեդիա | 7 | 13 | 20 |
| SG | Սինգապուր | | 8 | 8 |
| TH | Թայլանդ | 1 | | 1 |
| TR | Թուրքիա | 3 | 113 | 116 |
| TW | Տայվան | 5 | | 5 |
| SI | Սլովենիա | | 44 | 44 |
| SK | Սլովակիա | | 5 | 5 |
| VN | Վիետնամ | | 5 | 5 |
| VG | Վիրջինյան կղզիներ | 4 | | 4 |
| UA | Ուկրաինա | 10 | 95 | 105 |
| US | ԱՄՆ | 237 | 165 | 402 |
| ZA | Հարավային Աֆրիկա | 2 | | 2 |
| Ընդամենը | | 1795 | 3025 | 4820 |

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2013թ. հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 12 համար հայերեն և ռուսերեն լեզվով: Տեղեկագրերում ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 99 գյուտի, 31 օգտակար մոդելի արտոնագրերի, 32 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1574 գրանցված ապրանքային նշանների մասին, ընդգրկվել են նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

Հրապարակվել է «Ապրանքային նշանների հայտեր» տեղեկագիրը: 2013 թվականին հրապարակվել է տեղեկագրի 24 համար:

Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաև «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2012թ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հա-

յերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2012 թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների վերաբերյալ:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ և Հայաստանի ազգային գրադարան, ինչպես նաև ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաև ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT»

անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որտեղ զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 99 գյուտի և 31 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են:

2013թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ», «Օրենքներ», «Միջազգային պայմանագրեր», «Ենթաօրենսդրական ակտեր», «Ձևաթղթեր», «Պաշտոնական հրապարակումներ» ենթաէջերը:

Ներդրվել է «ապրանքային նշանների գործավարություն» նոր ենթահամակարգը:

Իրականացվել է «ապրանքային

նշանների միջազգային գրանցումների գործավարություն» և «արդյունաբերական նմուշների գործավարություն» ենթահամակարգերի արդիականացման տեխնիկական առաջադրանքի նախապատրաստումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության աշխատանքների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը: Գործակալությունը վերազինվել է 4 Intel(R) Core i7 տեսակի համակարգիչներով, 3 սերվերով, համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները:

Իրականացվել է լոկալ ցանցի մալուխների ապամոնտաժում և մոնտաժում:

Իրականացվել է համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի ախտորոշում և անսարքության վերացում:

ԳՐԱՆՑՎԱԾ ՕՐՑԵՎՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

Ստավոր սեփականության բնագավառի ՀՀ օրենսդրությանը համապատասխան գործակալությունը սկսած 1995 թվականից իրականացնում է արդյունաբերական սեփականության գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման հետ կապված դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 116 դիմում, որոնցից 79-ը՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 20-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 2-ը՝ ապրանքային նշանների ֆրանչայզինգի մասին, 3-ը՝ ապրանքային նշանների ենթալիցենզիաների մասին և

4-ը՝ ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, ինչպես նաև 4-ը՝ գյուտի արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձանց միջև:

2013 թ. ընթացքում գործակալության կողմից գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը 2012թ. համեմատ նվազել է 12.1%-ով և կազմել է 116 պայմանագիր: Վերջին հինգ տարիներին գրանցված իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման պայմանագրերի թիվը բերված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|--------------------------------------|------|------|------|------|------|
| Իրավունքի փոխանցման պայմանագրեր | 72 | 72 | 56 | 101 | 79 |
| Լիցենզիայի տրամադրման պայմանագրեր | 25 | 19 | 24 | 25 | 31 |
| Ֆրանչայզինգի պայմանագրեր | - | - | 1 | 5 | 2 |
| Գրավադրման պայմանագրեր | - | - | 2 | 1 | 4 |
| Գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը | 97 | 91 | 83 | 132 | 116 |

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի համաձայն գործակալությունը իրականացրել է 276 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 222 գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և 8

արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

2013թ. ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1574 ապրանքային նշանների վկայագրեր, 99 գյուտի արտոնագրեր, 31 օգտակար մոդելների արտոնագրեր և 32 արդյունաբերական նմուշների վկայագրեր: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 508 փոփոխություն:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքները, ուշադրություն է դարձվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացմանը և բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, գլխավորապես՝ իրավական դաշտի կատարելագործմանը:

2013թ. ընթացքում շարունակվել են «Հեղինակային իրավունքի մասին»

Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքները, որն իրականացվել է Եվրամիության անկախ փորձագետի մասնակցությամբ, որը 2014 թ. կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Նոր օրենքի նախագիծը մշակվել է ՄՍՀԿ հանձնարարականների, ինչպես նաև TRIPS համաձայնագրի և Եվրամիության մի շարք դիրեկտիվների պահանջներին համապատասխան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության շրջանակներում Ստավոր սեփականության գործակալությունը շարունակում է համագործակցել միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:

2013թ. մարտի 14-15-ը Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ) Հեղինակների և կոմպոզիտորների կազմակերպությունների միջազգային կոնֆեդերացիայի (CISAC) հետ համատեղ կազմակերպեց և անցկացրեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը և իրավունքների կառավարումը» վերնագրով սեմինարը, որտեղ ելույթ ունեցան օտարերկրյա հյուրերը, «Հայհեղինակ» ՀԿ-ի աշխատակիցները և ՄՍ գործակալության մասնագետները:

Թվինինգ ծրագրի շրջանակներում

Երևան է ժամանել դանիական կողմի պատվիրակությունը՝ ծրագրի ղեկավար Քել Նյունանի գլխավորությամբ:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Հայաստան հրավիրվեցին եվրոպական փորձագետներ իրավակիրարկման գործող օրենսդրության վերլուծություն կատարելու համար: Համապատասխան փոփոխություններ ու առաջարկություններ ներկայացվեցին Քաղաքացիական, Քրեական և Քաղաքացիական դատավարության օրենսգրքերում:

2013թ. հունիսի 24-28-ը հեղինակային իրավունքի և ապրանքային նշանների մասնագետները մասնակցեցին վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներին:

Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Յորգան Բլոմբլիստի և հեղինակային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Դիոնիսիա Կալինիկուի կողմից մշակվել է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների վերաբերյալ մեթոդաբանական ձեռնարկ: Ձեռնարկը նախատեսված է ինստիտուտների, գրադարանների, ստեղծագործական միությունների և այլ շահագրգիռ կողմերի համար: